ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№__4420-Ա___ « 30 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ
ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՍԵԼՈՆԱ ՔԱՂԱՔ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Բարսելոնայի քաղաքապետ Խաումե Կոլբոնի Կուադրադոյի հրավերը՝ Smart City Expo համաշխարհային կոնգրեսի 14-րդ թողարկմանը մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի նոյեմբերի 3-ից 7-ը գործուղել Իսպանիայի Թագավորության Բարսելոնա քաղաք՝ հետևյալ կազմով.

Տարոն Մարգարյան	Երևան քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Պետրոս Պետոյան	Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Սարգիս Մանուկյան	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Տարոն Մարգարյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին.

2) Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Կենտրոն վարչական շրջանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին.

3) «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սարգիս Մանուկյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Տարոն Մարգարյանի բացակայության ընթացքում աշխատակազմի վերահսկողության վարչության պետի պարտականու-

թյունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Խաչատուր Տոնոյանին:

3. Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի բացակայության ընթացքում Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արթուր Ջուլհակյանին:

4. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սարգիս Մանուկյանի բացակայության ընթացքում «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն փակ բաժնետիրական ընկերության տնօրենի տեղակալ Արտեմ Ներսիսյանին:

5. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ